Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

2690
№ 3937

27982

ԽՈՐՀՈՒՐԴՔ ՀԱՆԴԻՍԻ

ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹԵԱՆՆ

ԱՄՏՈՒԾՈՑ

ՅԵՂ Ի ԳՐԱՒՈՐ ԲԱՆ

ՊՕՂՈՍ Գ. ՔԼԻՐԻՍՏԷՃԵԱՆ

ԱՇԱԿԵՐՏ

Ս. ՆԵՐՍԻՍԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Ի ԽԱՍԳԻՒՂ

ԳՈՐԾ ՉՈՐՐՈՐԴ

ԳՐԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ՔԻՒՐՔՃԵԱՆ

1872

ԽՈՐՀՈՒՐԴՔ ՀԱՆԴԻՍԻ

ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹԵԱՆՆ

ԱՍՏՈՒԾՈՅ

ՅԵՂ. Ի ԳՐԱՒՈՐ ԲԱՆ

ՊՕՂՈՍ Գ. ՔԷՐԼԻՍՏԷՃԵԱՆ

ԱՇԱԿԵՐՏ

Ս. ՆԵՐՍԻՍԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Ի ԽԱՍԳԻՒՂ

ԳՈՐԾ ՁՈՐԲՈՐԴ

ԳՐԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Կ. ՊՕԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ռ. Յ. ՔԻՒՐՔՃԵԱՆ

1872

47982

ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
Զ 9900

ԱՌ

ՄԻՔԱՅԷԼ ԷՖԷՆԴԻ ՄՈՍՉԵԱՆ

ՈՒՂԵՐՁ

Զայս դոյզն խայրիս վաստակոց իմոց յոր ախորժանօք պարապէի ի վարժ՝ յընթացս ուսման հայրենի բարբառոյ իմոյ, եւ զոր ի խնդրանաց ոմանց Ուսումնակցաց իմոց սիրելեաց յորդորեալ ածեմ ի լոյս, Քեզ նուիրեմ յերախտապարտ սրտէ, Մեկենասդ Հայկազն մանկտւոյն, իբրեւ սքանչացողիդ եւ սիրողի գրաւոր Հայ բարբառոյ։ Ցոյս մեծ է յիս զի եւ այս գործ Ընկերութեան մերոյ արժանացեալ խնդամիտ ընդունելութեան ձերում՝ սիրայորդոր բերիցիմ յայլ եւս վաստակս զարթուցիչս զգացմանց հոգւոյ եւ պատշաճաւորս ճաշակի հասակակցաց իմոց համբակաց։

Ի Բ. Հոռի Ռցիր

Ի Խասգիւղ Կ. Պոլսոյ

ԳՐԱԴԱՐԱՆ
ԹՎԱԿԱՆ ՀԻՇ. 1891 ՆՈՐՈՒՏ. 1899
ОСНОВ. НОВ. ПОСТ.
BIBLIOTEKA
Հ. ՍՍՀ ԳԱ Գրադարան

ԽՈՐՀՈՒՐԴՔ ՀԱՆԴԻՍԻ

ԱՐԱՐՉԱԳՈՐԾՈՒԹԵԱՆՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա.

Փառաւորեսցուք զԱստուած, քանզի մեծ է նա և ամենուրեք, նա տեսանէ զամենայն. օրհնեսցուք զԱստուած, քանզի ամենակալէ նա։

Ցոչընչէ արար նա զամենայն, զարեգակն՝ ի լոյս տուրընջեան, և զլուսին՝ ի լոյս գիշերոյ։

Կէտն՝ որ պատառէ զալիս Ովկիանու, փիղն՝ որ վաղվաղէ ի վերայ լերանց, Որդն՝ որ սողայ ի գետնի, և որ ինչ յաշխարհի աստ, Աստուած է այնոցիկ ամենեցուն արարիչ։

Թռչունք ի ճռուողել իւրեանց ի վերայ դալարաղգեաց ոստոց՝ հանեն նուագս գովեստից առ Աստուած։ Առուակն օրհնաբանէ զնա յընթանալն իւրում ընդ քարաժայռս խոխոջմամբ։

Թէպէտ դեռ մանուկ տիոմք, այլև ես փառաւոր առնեմ զԱստուած։

Զեն բազում ժամանակք յորմէ հետէ ծնեալ է իմ, յառաջագոյն չև էին լուծեալ կապանք լեզուի իմոյ, և չգիտէի թէ իցէ Աստուած, անհասանելի էին ինձ ամենայն ինչ, այլ այժմ քանզի կարեմ խօսել, պարտ է զի փառաւոր արարիցս զնա, և զի կարեմ ճանաչել զբարութիւնս նորա, պարտ է ապա սիրել զնա յամենայն սրտէ իմմէ։

Կոչեսցէ զիս Աստուած, պատրաստեմ երթալ զհետ նորա, հրամայեսցէ ինձ, վաղվաղակի հնազանդեցայց նմա։

Ըստ աճել տիոցս՝ խելամուտ եղեց մեծի շնորհաց նորա, և ուսայց փառաւոր առնել զնա և ծառայել նմա։

Բ.

Այլ արդ զի զարգացեալ է իմ և ուսեալ ի հօրէ իմմէ ճանաչել զԱստուած, և լուեալ զքահանային պատարագ և զխրատս նորա, գիտեմ զի Աստուած արար զիս՝ առ ի սիրել զնա և ծառայել նմա։ Իսկ արդ սիրեցից զԱրարիչն իմ, և երբէք ոչ ամաչեցից օրհնել և

փառաւորել զնա ամենայն ուրեք։

Քանզի գիտեմ զի Աստուած եդ զիս յաշխարհի աստ, փրկեաց զիս ի մեղացն յոր արկ ըզմեզ Ադամ Նախահայրն մեր, առաքեաց զՈրդին իւր միածին առ ի փրկել զմեզ, ընդ որում և զՀոգին սուրբ։ Որդին Աստուծոյ ծընաւ յամենասուրբ կուսէն Մարեմայ՝ ի թագուհւոյն երկնից և ի զօրաւոր բարեխօսէն մերմէ։

Յիսուս որդին Աստուծոյ ուսոյց մարդկան զաստուածային վարդապետութիւն իւր, ընտրեաց զանձն իւր ի փրկութիւն մեր, մեռաւ անարգաբար ի խաչին, յարեաւ յաւուրն երրորդի, և յետ աւուրց քառասնից համբարձաւ յերկինս։ Իսկ առ անմահ գործելոյ զանգին պատարագ խաչին իւրոյ, տուեալ է նորա իշխանութիւն ամենայն քահանայից՝ հանապազորդ և ամենայն ուրեք առնել զյիշատակ նորա սրբով պատարագաւ, յորում՝ իջանէ նա ի վերայ սեղանոյն որպէս էջն յաշխարհ։

Այսու սրբով խորհրդով գալստեան իւրոյ ամենայն աստուածային փառօք իջանէ յեղկելի սիրտս մեր, որ ի ձեռն հաւատոյ և խոնարհութեան և եթ կարող է արժանի լինել նմա։

Յետ սրբարար մկրտութեանն հաստատեաց նա զսուրբ խորհուրդն ապաշխարութեան առ ի քաւութիւն մեղաց մերոց, և իշխանութիւն ետ եկեղեցւոյ թողուլ զմեղս մեր՝ ի խոստովանել մեր զայնոսիկ ոգւով հլութեամբ փոխանորդին Աստուծոյ։

Արդ զայս ամենայն գիտացեալ հիացմամբ փառաւորեմ զանբաւ գթութիւնն Աստուծոյ, և մի՛ լիցի ինձ երբէք դադարել ի սիրելոյ զնա և զնմանէ գոհանալոյ։

Գ.

Օ՛ն, ելցուք ի դաշտ՝ տեսանել եթէ զի՞ արդ աճեն ծաղկունք, ունկնդիր լիցուք դայլայլկաց թռչնոց։ Ե՛կ, սիրելիդ իմ, խաղալ և զբօսնուլ ի նորաբոյս դալարիս։

Վաղ իսկ անցեալէ ձմեռն, ծառք վերընձուղին, պարզին վարդակարմիր ծաղկունք դեղձւոյն, դալարագեղ պճնին տերեւք, անանուխ և սամիթ և այլք այսպիսիք սիւռին ընդ բլուրս և ընդ ձորս. մանուշակն համեստ թաղչի ընդ ստուերաւ, և քաղցրաբոյր ծաւալէ զհոտ իւր։

Հաւու նստեալ ի թուխս՝ ժամէ ի ժամ ճնայ անձկանօք պահուն բեկանելոյ կոցաւն զխեճեպս ձուոցն և արտաքս ելանելոյ յայնոցիկ սիրասուն վառեկացն։

Գառինք նորածինք հազիւ հաղ կարեն կալ ի մարմանդի ի վերայ անզօր ոտիցն և դողդոջեալ յենուն ի մարս իւրեանց։ Ո՛վ մատաղ գառնուկք, տիպարք անմեղութեան, եթէ անկանիջիք զգետնի, չիք ինչ ձեզ անտի վըտանգ, քանզի բնութեան սիռեալէ զերկրաւ գորգ ինչ քնքուշ կանաչագեղ մարմանդի։

Թիթեռնիկք հոլաթեւեալ յարեգակն կոյս, թռթռին ճիւղոյ ի ճիւղ և ի ծաղկէ ծաղիկ։

Ամենայն ձագունք նորածինք հրճուին ի լոյս բարեբաստիկ, և ցիր ընդ ցան աստ և անդ խաղան և խայտան, և փառաւոր առնեն զԱստուած, որ կեանս ետ նոցա։

Նոքա խայտալ և եթ կարեն և ցնծալ սըրտիւ, այլ մեք օժտեալ եմք և այլով իւիք շընորհօք, որով կարող եմք օրհնաբանել զԱստուած ի յօդաւոր բարբառ շրթանց մերոց։

Թռչունք ճռուողեն, գառինք մայեն, այլ մեք միայն կարեմք խօսել զբարեացն Աստուծոյ։

Այպա վառաւորեսցուք զԱստուած՝ օրհ-
նաբանելով զնա և ի դիմաց արարածոցն, ո-
րոց ոչ են լեզու։

Ո՛վ ծառք ծաղկեալք, և գառինք մա-
տաղերամք, ո՞չ ապաքէն եթէ լեզու էր ձեր,
գովաբանէիք զբարութիւնն Աստուծոյ. այլ զի
պակասէ ձեզ յօգաւորութիւն բարբառոյ,
մեք ինքնին բարբառեսցուք փոխանակ ձեր,
մեք շնորհս կալցուք զբարձրելոյն Աստուծոյ
փոխանակ ձեր՝ ընդ ամենայն տեղիս, ի լե-
րինս բարձունս և ի դալարագեղ վայրս։

Դ.

Հովիւ խնամ տանի ոչխարաց իւրոց և ա-
րածէ զնոսա ի դաշտս մարգածինս և առ ա-
փունս ականակիտ ջուրց, զգառինս նորածինս
և վաստակաբեկս բառնայ յուս իւր և ի գիրկ-
սըն, և զօցտեալսն կոչէ առ ինքն։

Աստուած է Հովուապետ բարի, Տէր տիե-
զերաց, և խնամակալ ամենայնի, փառք նորա
են երկիր, և մարդիկ՝ հօտ իւր, և բոյսք՝ ա-
ղօտ նորա։

Մայր սիրէ զորդի իւր, և ի գութ ծնե-
լասէր գգուէ և ողջագուրէ զնա ի վերայ
ծնգաց իւրոց. գուն գործէ կաղդուրել զմար-
մին նորա կերակրովք, և տակաւ խելամուտ
առնէ զնա ամենայնի։ Ի խօթանալ նորա ա-
ռաւել ևս խանդաղատանօք խնամէ զնա, և ի
ննջելն հսկէ զդիշերն ողջոյն առ նմա, և ակն
կալեալ մնայ անձկանօք զարդանալոյ մանկանն,
զի ուսուցցէ նմա զճանապարհս առաքինութեան։

Աստուած է զօրացուցիչ ամենայն մարց,
աղատարար նոցա ի վտանգաց, և մխիթար և
խնամակալ յամենայնի։

Աստուած է որ պաշտպանէ զամենայն, զի
ի նմանէ արարաւ ամենայն ինչ։ Ամենայն թա-
գաւոր իշխէ ի վերայ ժողովրդեան իւրոյ, թագ-
ոսկի ի գլուխ իւր, և մական արքունի ի ձե-
ռին, բազմեալ ի գահ շքեղ՝ հրամայէ ամե-
նեցուն, և ամենեքեան խոնարհեալ մեծարանս
դնեն նմա պատկառանօք։ Թագաւոր՝ որոյ ա-
թոռակիցս իւր իցէ իմաստութիւն, պաշտպան
կայ բարեգործաց, և պատուհասէ՝ որոց զչար
իցէ արարեալ։

Աստուած է թագաւոր թագաւորաց, և
թագ նորա արեգակն. գահոյս արկեալ բազմի

նա ի վերայ աստեղաց, հրամայէ նա մեզ կեալ և կեամք. հրաման տայ մեռանել և մահու մեռանիմք, իշխանութիւն նորա տարածանի ի վերայ ամենայն երկրի, և լոյս երեսաց նորա ցոլանայ յամենայն արարածս իւր։

Աստուած է մեր հովիւ, պարտ է մեզ երթալ զհետ նորա. Հայր մեր է նա, պարտ է մեզ սիրել զնա. Թագաւոր մեր է նա, և պարտ է մեզ հնազանդել նմա։

Ե.

Օ՛ն, եկայք և ի զնին մատերուք բոսորագեղ թերթից վարդիս սյսորիկ, որպէս տատանի նա ի վերայ կանաչագեղ ցօղնոյն, չըքնաղ դշխոյն ծաղկանց, որոյ տեսիլ նազելի և հոտ քաղցրածաւալ յինքն ձգէ զամենեսին։ Այլ առաւել գեղեցկագոյն է որ զվարդն աբար, և սիրելի ամենայն սրտի։

Հզօրագոյն է առիւծ քան զամենայն կենդանիս։ Ցեղանել նորա յորջոյ իւրմէ, ճօճէ զտուտն ճապուկ, մունչէ որոտագին, և ամենայն կենդանիք ճարակաւորք թողուն առ ա-

հի զդաշտն և գնան անտի ի բաց, մինչև վայրագասուն իսկ գազանաց յերեսաց նորա ի փախուստ խուճապել յանապատ տեղիս։ Այո՛, հզօր է առիւծ, այլ որ ստեղծն զնա հզօրագոյն է քան զնա. Նորա ըստ սրտի իւրում և ըստ կամացն չափ և սահման եդեալ է կենաց մարդկան, և չիք ոք որ ի մեղանչելն իւրում փրկեսցի յարդար բարկութենէ նորա։

Լուսապայծառ է արեգակն. ի ծագել իւրում՝ յանամպ եթերին, և ի հատանելն զրոցակէզ ճանապարհ իւր՝ սփռէ ի վերայ երկրի զլոյս իւր։ Այլ քան զարեգակն պայծառագոյն է և փառահեղ որ հաստատեացն զնա. ընդ ամենայն տեղիս է նա, և լոյս երեսաց նորա ի վերայ ամենայն արարածոց. գիշեր նմին անմատոյց, և Աստուած է անուն նորա, գործք նորա են Տիեզերք, և գեր ի վերոյ է նա քան զամենայն գործս իւր. նա ինքն է լրումն և պսակ գեղեցկութեան, բարութեան և ճշմարտութեան։

Զ.

Ա.հաւասիկ ամիսոփին ճառագայթք արեգական, ցոլն գիշերային լիլանէ զերկրաւ, և հրատապ ջերմութիւն տուընջեան մեղմանայ ի սմին պահու։

Ծաղկունք փակեն զիւրեանց թերթս նը-կարէնս, և գլխակոր անկանին զցօղնովք իւրեանց։

Վառեակք նիրհեն ի քուն քաղցրութեան ընդ թեւօք մարց իւրեանց, թռչունք դադարեն յերգոց, և մտեալ ի բոյնսն՝ գլուխ ընդ թեւօք հանգչին յոստս ծառոց։

Ո՛չ ինչ բզզիւն լսելի լինի ի փեթակին, յոր մեղուք հանապազորդ մուտ և ելս առնեն, և որոց թողեալ զվաստակ իւրեանց ննջեն ամենեքեան յանդորրու ի մոմեղէն սենեկի իւրեանց։

Ոչխարաց մակաղելոց ի վերայ փափուկ գեղման իւրեանց ո՛չ ևս լսի բառաչ ի վերայ բլրոց։

Մանկունք մոռացեալ են զխաղս իւրեանց, չիք ոք չիք ուրեք. ոչ ոտնաձայն, և ո՛չ ան-

ցորդ ի ճանապարհս, դարբինն ոչ ևս բախէ զուռն իւր ընդ սալ, ո՛չ ևս լսի խռընտիւն սը-ղոցի հիւսան, ննջեն ամենայն արարածք, մարդիկ և անբանք։

Երկինք և երկիր ի խաւար պատեալ, և ահա գիշե՛ր է ամենայն ուրեք։

Ո՞ իցէ որ հսկէ որոց ննջենն, և յապիկա-րութեան նոցա ո՞ պաշտպան կայ նոցա։

Է. ակն որ ոչ երբէք նիրհէ, և տեսանէ զամենայն առանց լուսոյ արեգական, չեն ինչ նմա պէտք լուսոյ նորա ի ճանապարհի իւրում, և ոչ առանին լուսոյ կանթեղին։ Ո՛չ ի խնդիր լինի նա աստեղց յերկինս ի գիշերի, չիք ինչ որ արգել լիցի տեսութեան նորա. խնամէ զա-մենայն մարդ, ակն է նա Աստուծոյ, որոյ ձե-ռքն հանապազորդ պաշտպանէ զմեզ։

Տուաւ մեզ քուն Աստուծոյ ի սիրոփանս և ի դիւր վաստակոց մերոց, և գիշեր առ ի հանդիստ։

Մայրն որդեսէր՝ մատն ի բերան և ոտն ի մատին չրջի ընդ երեկոյս ի տանն անչշունչ յամենայն տեղիս առ ի խափանել և զդոյզն աղմուկ, զի մի՛ զարթնուցու մանկիկն ի քնոյն քաղցրութենէ. խնամով արկանէ զնովաւ զվա-

բագոյր որբանին, և բառնայ զՄրագն զի մի՛ արդել լիցի աչաց նորա։

Այսպէս և Աստուած ձգէ զսեւաթոյր քօղն զերկրաւ, և խաղաղեցուցանէ զամենայն ինչ, զի քաղցր ի քուն լիցի գերդաստան իւր մեծ։

Ի քուն լերուք հանգստեամբ, ամենայն վաստակեալք, ննջեցէք մանկունք փոքունք և բզէզք, քանզի հսկէ Աստուած ի վերայ ձեր, և աչք նորա անքուն հանապազորդ բաց են առ ի պաշտպանել զձեզ։ Յորժամ մեկնի խաւար և փարատին աղջամուղջք գիշերոյն, և մինչ արփենւոյն լուսաստիւռ ճառագայթք շողանայաւ ձեր, գոհացարուք զՑեառնէ որ պահպանեաց զձեզ ի գիշերի։ Ծաղկունք բուրեն Աստուծոյ զքաղցր բուրմունս իւրեանց։ Թռչնոց մինչչեւ ընկեր զընկեր կոչեցեալ գոհարան լինին զնմանէ. և մարդ ելանէ յանկողինս իւր՝ ունելով զանունն Աստուծոյ ի սրտին, և յիջանէն անտի ընդ առաւօտն՝ վերստին փառաւորէ զանուն նորա։

Է.

Ասա՛ ինձ, ո՛րդեակ, ո՞ւստի եկիր և զի՞նչ տեսեր։

Շրջեցայ ընդ մարմանդս, և ոչխարք ճարակէին ընդ պարարտ դալարիս, և շուրջ զինեւ մակաղէին ընդ ստուերաւ տերեւախիտ ծառոց։ Յորեանն ատոք բուսեալ էր յարտավայրի և մեկոնն և հարսնուկ խառն աճէին ընդ նոսա. մարմանդք զարդարեալ էին մեծաւ շքեղութեամբ։

Եւ ո՞չ այլ ինչ տեսեր և իքնին առեր, ո՛րդեակ. է և այլ ինչ վերագոյն քան զայդ ամենայն, Աստուած ի դաշտի էր, և ո՞չ տեսեր զնա։

Յածեցայ ընդ թանձրախիտ անտառս, և տեսի զի շնչէր հողմ յոստս ծառոց, քարավազ՝ խոխոջանօք վայրաբերէր ի դագաթանց ժայռից, սամոյրն ոստոստէր յոստոց յոստս ծառոց, թռչունք միաբարբառ երգէին քաղցր ինուագ։

Միթէ զայդ միայն լուար, ո՛րդեակ, դա՛ր ձանդրէն ուստի եկիրն, քանզի առաւել քան զայդ ամենայն՝ է՛ այլ ինչ կարի մեծ և արժանի լսելոյ։ Էր Աստուած ի ձայն հողմոյն և ի

27982
29900
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

կարկաջ ջրոյն, և զիա՞րդ ոչ լուար զձայն նորա։

Տեսի զլուսին, որ բարձրանայր յետ կուսէ ծառոց իբրև գկանթեղ արծաթի, աստեղք ծագէին մի զկնի միոյ, և ահա յանկարծ յարեան ամպրոպք արշնաթոյրք, և ընթանային ընդ հարաւ։ Փայլակն լուսաւորէր զերկինս, կայծակն ի հեռուստ որոտայր շանթարձակ, լուայ զահագին որոտումն և եղէ սրտաթափ։

Ի կայծակէ՞ և եթէ երկնչիս, միթէ չէ՞ր այլ ինչ աւելի քան զփայլակն ահարկու, դա՛րձ անդրէն, որդեակ, քանզի է ինչ մեծ առաւել քան զայդ ամենայն, զիա՞րդ ոչ ծանեար զԱստուած որ էր ի մրրկի անդ։ Աստուած է ամենայն ուրեք և յամենայնի զոր լսեմքն և տեսանեմք, չիք ինչ առանց նորա, հարկ է զի և ի միտս մեր լիցի նա հանապազ։

Ը.

Արեգակն բոցակիզէ զմեզ որպէս կապար հրաշէկ, զի հասարակեցաւ օրն, եկայք նստարուք ընդ հովանեաւ վարսագեղ ծառոց, որոց ոստք արկանեն զմեզ ստուեր հանգոյն

սաղարթախիտ տաղաւարաց, ընդ որս ճաճանչ արեգին չկարեն թափ անցանել։ Դալարազարդ մարմանդ տարածանի ընդ ոտիւք մերովք, առուակն ականակիտ մօտ քերեալ հոսէ առ ծառովք, և երես երկրին շուրջանակի ծաղկազարդ յօրինեալ. հանգիցուք ի տեղւոջս, և նիրհեսցուք ի քուն քաղցր։

Ոչխարք մակաղել և եթ գիտեն և ի քուն լինել ընդ հովանեաւ, այլ մեք բանաւորք ելով կարեմք փառաւոր առնել զԱստուած և ժամանեցուցանել առ նա զբարբառ մեր։

Աստուած, արարիչն մեր, արար զջերմութիւն արեգական յաճումն բուսոց և զհովանիս ծառոց ի հանգիստ, և զծառս պտղալիցս՝ ի սնունդ, և զուրք կարկաջահոսք յոռոգումն երկրի։

Զիա՞րդ մարթ լիցէ մեզ բարձրացուցանել զձայնս մեր մինչև յերկինս, և անդր քան զերկինս երկնից։ Այլ չէ ինչ հարկ զի ձայն մեր հասանիցէ մինչ ի յերկինս, քանզի լսէ Աստուած և զմրմունջ մեր. և որպէս յերկինս, նոյն և յերկրի է նա։

Այլ ո՛վ մանկունք աղաղրիք, զիա՞րդ հնար լիցէ մեզ խօսել ընդ նմա ընդ յաւիտենա-

կանին Աստուծոյ։ Մի՛ մոռացուք զաչն որ արար զմեզ, եթէ ապիկարս գացուք զմեզ ի խօսել ընդ նմա, դէթ թոթովեսցուք զանուն նորա, որ երաց զբերան մեր։ Նա՝ զի և ի չխորհելն մեր զնմանէ՝ ոչ ի մոռացօնս արկանէ զմեզ, հանապազ օրհնէ նա զմեզ ևս և ի յապաղել մեր յօրհնաբանութիւն նորին։

Նա հաստատեաց զքնքուշ զանգամն մեր, և օր քան զօր կազդուրէ զայնոսիկ, ապա փառաւոր արասցուք զնա հանապազորդ։

Ոստք փթթին, արձակին տերևք, ծաղկունք փոխին ի պտուղս. այլ և ոչ մին ի նոցանէ ճանաչէ զԱստուած, և կարէ չնորհս ունել զբարութենէ նորա։

Բուրմունք ծաղկանց և տեսիլ պտղոց զմայլեցուցանեն զմեզ, այլ չեն նոցա բանք ի փառաւորել զԱստուած։

Նա արար զտունկս առ ի պտղատու լինել մեզ, և զմարդ յօրհնաբանութիւն իւր։

Սիրեմք զԱստուած, քանզի օրհնէ նա զմեզ, գոհանամք զնմանէ վասն ստեղծանելոյ նորա զմեզ, զի քաղցր են կեանք։ Պաշտօն հարկանեմք նմա, քանզի Արարիչ է ամենայնի, սիրեմք զարարածս նորա, զի ձեռաց նորա են գործք։

Չէ մարթ ապաքէն ունել մեզ զբարութիւնն Աստուծոյ, որով սիրէ նա զամենայն բանաւոր արարածս իւր. այլ կարեմք ուրախ լինել ընդ բարութիւնս նոցա ամենայն, զոր ընձեռէ նոցա աննախանձ։

Գոհաբան լիցուք զՏեառնէ ի զբօսանս մեր և ի նեղութեան, ի զրկանս մեր և յուրախութեան, օրհնեսցուք զնա ի յարթնութեան և ի քուն, և անուն նորա եղիցի հանապազ ի շրթունս մեր։

Թ.

Հիւղ մշակին ծածկեալ է ի պրտուոյ, մայրն բաղմեալ առ դրան մտնէ բուրդ, մանկունք նորա կան առ նմա, զբօսնուն ի դալարուղջ. դուստրն երէց ուսուցանէ քերցն հնազանդ լինել և վաստակել։ Հայրն առ ի հայթայթել զպարէն նոցա ընդ քիրտն մտեալ աշխատի զօրն ցերեկ. Է զի սերմանէ նա և է զի հնձէ, մերթ գործէ զհող և մերթ ցնցմամբ ծառոց թափէ զպտուղսն. ի մտանել նորա ընդ երեկս ի խրճիթն, մանկունք նորա ցնծութեան

կայթիւք ելանեն ընդ առաջ, մայրն պատրաստէ զընթ.իս։

Ամենեքին որդիք և անդամք են միոյ միայնոյ գերդաստանի, և զլուխ ընտանեացն հայր նոցա։ Եթէ ընտանիք բազմաթիւ իցեն և երկիր բազում, ծառայք լինին նոցա յօգնականութիւն, և ամենեքեան հանդչին ընդ միով յարկաւ։ Ուտեն զնոյն հաց և ի ծուռնր իջեալ միաբան փառաւորեն զԱստուած։ Շաղկապեալ կան ի մի զոդ սիրոյ, և ի ջերանելումեք ի նոցանէ յախտս ինչ, գութք աղեաց ամենեցուն զնովաւ խարշատին, և ի բժշկիչն՝ խնդան ամենեքին ուրախութիւն մեծ։

Տնակք մօտ առ մօտ կանգնեալ, և գոգցես իմն ամենայն գերդաստանք դրացի են միմեանց։ Ի ճեմել և կամ յերթալն նոցա ուրեք պատահեն միմեանց, վաճառեն և գնեն յիրերաց, և ի լսելն զձայն զանգակին երթանյեկեղեցի։ Տեսեալ զաղքատն ողորմին նմա և մխիթարեն զախտաժէտն։

Այս օրինակ է կենցաղ գեղջէից ի չէնս կառուցեալս ընդ ստուերաւ անտառաց։ Այսպէս են և քաղաքք և անթիւ պողոտայք նոցա, և իշխանք։ որ վարեն զնոսա։

Աշխարհ ինչ մեծատարած հանդերձ քաղաքօք բազմօք կազմէ թագաւորութիւն, որոյ սահմանք են լերինք։ Գետք՝ ճանապարհք նորա երկայնաձիգք, և ծով շուրջ պատէ զնովա։ Հայրենակիցք որք ընդ միով տէրութեամբ կան, խօսին զնոյն և զմի լեզու։ Միագունդ մարտնչին, ի միասին վայելեն ի խաղաղութեան և անսան միում և եթ թագաւորի։

Պետութիւնք բազումք, կղզիք, ծով և ցամաք՝ ընդ այլ և այլ գօտւովք երկնից կազմեն համատարած զաշխարհ ընդ իշխանութեամբ միայնոյ Աստուծոյ։ Որպէս մրջիւնք ի բոյնս իւրեանց այնպէս և մարդիկ անհամար են ի վերայ երկրի։ Որոց բնակութիւնք իցեն ի գաւառս արեւակէզս, սեաւ են դոյնք նոցա։ Եւ որոց յերկիր ցրտութեան, մուշտակօք պատրսպարեն զանձինս։ Են որք զովանան գինեաւ, և են որ ըմպեն զկաթն քոքոյի։ Այլք երթան ի խնդիր հովասուն վայրաց և ականակիտ ջուրց ի բոյժ ծարաւոյ իւրեանց։

Մարդիկ համօրէն միոյ Աստուծոյ են ընտանիք, և անձնիւր ոք ճանաչէ զԱստուած, որպէս ոչխար զիւրն հովիւ, ոմն յայս լեզու և ոմն յայն կարդայ զԱստուած, և նորա խելա-

մուտ լեալ պիտոյից նոցա հասանէ յօգնակա-
նութիւն. չիք ոք ընդդիմակաց՝ որ ազատ ի-
ցէ ի պատուհասէ նորա, և ոչ հզօր՝ որ անկա-
ցուցանիցէ պաշտպանութեանն Աստուծոյ։

Յողնաթշուառ խափշիկուհւոյն ի դերու-
թեան անդ իւրում փարեալ զորրանաւ աք-
տացելոյ մանկանն՝ քաղին ոգիք և կթոսին
ծունկք, եթէ ո՛չ Աստուած կացեալ առ նո-
վաւ քաջալերիցէ զնա։—Բաց զբերան քո,
կինդ եղկելի, կարդա՛ զԱստուած և ժամա-
նեսցէ քեզ յօգնութիւն։

Եւ դու, ո՛վ արքայ, որ ունիս աշխարհս
բազումս ընդ իշխանութեամբ քով, և ի շար-
ժել յօնիցդ մահ սպառնաս, մի՛ լիցի քեզ ա-
սել երբէք եթէ չիք ինչ ի վեր քան զքեզ,
քանզի և քան զքեզ մեծ է Աստուած. եթէ մեղի-
ցես առաջի նորա, վաղ կամ անագան թօթա-
փեսցին ի գլուխ քո կայծակունք բարկութեան
նորա։

Երկերուք ի ցեառնէ, բնակիչք երկրի,
պաշտեցէք զԱստուած, զի ո՛վ ոք իցէ նորա ա-
ռարած և ո՛չ փառաւորեսցէ զնա, և ո՛վ իցէ
զոր օրհնեաց Աստուած, և նա զԱստուած ո՛չ
օրհնաբանեսցէ։

Ժ.

Ո՛ռ դոյզն ինչ աւաղ յափն քո, գուն
գործեա ընդ թուով արկանել զայնոսիկ,
տեսցուք եթէ կարո՞ղ իցես։ Թուեա՛ զչիղս
խոտոց դաշտաց և զտերեւս ծառոց։ Ապաքէն
և ո՛չ մին ի նոցանէ ընդ համարով անկանի,
սակայն գործքն Աստուծոյ առաւել եւս բազ-
մապատիկ են քան զայնոսիկ։

Ահէ եղեւին ի բարձրաբերձ լերինս, և
ուռենին տնկեալ ի գնացս ջուրց գլուխ ի խո-
նարհ կայ իզնին վճիտ առուակին, որ սողսոկեալ
գնայ առ բնովն։ Պատսպարին կանկառք սայ-
բասուր փչովք, բրդազգեաց մոլշին են տե-
բեւք կակուղք, և ճապուկն լուբիա և որթք
կռուեալ պատատին զնշդարեօք, կաղնի. խոր
արմատս հաստատեալ յերկրի զդէմունի շրջ-
թայաղերծ հողմոց։ Ծաղիկն մարգարիտ պրճ-
նազարդ բողբոջէ ի ստորոտս լերանց, կակաչն
խնդրէ զհող պարարտ և զձեռն խնամակալ։

Հիրիկն և եղէգն շաղապատին զմիմեամբք,
խոտն փափուկ բուսանի ի մարմանդս և թուփք
փշոց յանդգործ երկրի։

Շուշանն ջրային աճէ ի գետս, ծաղկունք

նորա լայնածիրք յերեսս ջուրց, շահոքրամն բուսանի ի ժայռուտս և քաղցր բուրումն նորա ծառալի ի սիփուռ։

Տերևք և բոյսք ուրոյն ուրոյն ունին զիւրեանց գոյն և զձև, տե՛ս զդալարիս որ աճեն ի դաշտս և զխոտս կոխան ոտից մարդկան եղեալ յանձուկ ճանապարհս, այլ ոչ ոք սերմանեաց զնոսա։

Են բոյսք, որ բուսանին ի վերայ բարձրաբերձ ժայռից՝ անմատոյց ոտից մարդկան, և են որ աճեն ի խորս անտառաց կամ՝ յանմարդի կղզիս։ Աստուած է որ ի թևս հողմոց թռուցելոց այսր և անդր սերմանէ զսերմունս, կերպաւորէ զնոսա ի գոյն և ի ձև, ոռոգանէ անձրևօք, և ցողովն երկնից աճեցուցանէ զնոսա, նա է որ երին երին երգունէ զնոսա և պարգևէ նոցա տեսիլս ակնապարարս, բուրումն քաղցրութեան հեղու զնոքօք՝ զդեցուցեալ ըզ նոսա ի թափանցիկ և ի նրբագոյն թերթս՝ հիանալիս աչաց տեսանելեաց։

Զի՞ որդ մարդ ելցէ քնքուշ վարդին զբոսորագեղ գոյն իւր առնուլ յարջնաթոյր հողէն, և շուշանին զբեհեղ իւր, զի՞ որդ ի սերմանեաց դուզնաքէից բուսանին ծառք մեծա-

մեծք, և զի՞ որդ գիտեն բոյսք զտեղի իւրեանց և զժամ վերընձիւղելոյ։ Ցետ տեղալոյ ձեան, գլուխ եղնակին ցցուի արտաքս ի հողոյ, և յաւուրս գարնանամտի՝ աղդ առնէ և զգալըստեղէ իւրմէ։

Են ծաղկունք որք խնդրեն զջերմութիւն արևու ամարայնոյ, և դափնին ընդ այլս մըշտադալար ծառոց զարդարէ զտխրութիւն ձըմերան։

Ամենայն բոյս բերէ զհամանմանն իւր, ո՛չ հասկ ցորենոյ ծնանի ի կորիզէ, և ո՛չ թին խընձորոյն կարէ յառաջ ածել զկեռասենի։

Ի ծածկել ձեան զերեսս երկրի և ի պատել սառնամանեաց զբուսովքն, տարածանէ Աստուած զնոքօք զխնամս իւր զի մի՛ գօսասցին։

Կապտին ծառք ի զարդուց իւրեանց, թոթափին տերևք, և գոգցես իմն ոսկերք նոցա և եթ մնան ի նոսին, և ի յարուցանել Աստուծոյ զշունչս գարնայնոյ՝ փթթեալ ի կանաչագեղ տերևս դառնան անդրէն ի կենդանութիւն։

Ի հրաշալեաց Աստուծոյ է պահպանութիւն բուսոց, և մինչ բնաւք զԱստուած քարոզեն, ինձ չէ պարտ խօսել զնմանէ. զի ամենայն դաշտք

հրաշից նորա են մատեան՝ և մէն մի ծաղիկ դաս խրատու՝ արկեալ ի գիր. կարկաչ առուակին՝ բարբառ իւր է և լեզու, և ամենայն արարածք փառաւոր առնեն զՀաստուած և պատմեն զնմանէ։

Ոչ կարեմք տեսանել զՀաստուած, զի չանկանի նա ընդ տեսլեամբ աչաց, այլ տեսեալ մեր զհրաշալիս նորա՝ պաշտեմք զնա։

Որ առաւել խելամուտն իցէ, առաւել ևս պարտի օրհնաբանել զՀաստուած. և ո՞ւմ մարթ իցէ գիտել զթիւ և զհամար գործոցն Աստուծոյ։

ԺԱ.

Հայեցարուք ի կաղնին հինաւուրց, ի փառըս և ի պարծանս գեղջն. զի՞նդ հաստաքուն է կոճղ նորա, ոստք և ճիւղք նորա կարծրապինդ և բազմաթիւ, և արմատք նորա խորափիտ հաստատեալք յերկրի՝ վերամբարձ ունին զծառն վիթխարի ամենայն ծանրութեամբ իւրով։

Թռչունք դնեն զբոյնս իւրեանց յոստս նորա, ոչխարք մակաղին ընդ հովանեաւ նորին,

և շինականք ակումբ առեալ բոլորին զնովաւ, այլ և ոչ ումեք յերիցագունից անտի վիճակեցաւ տեսանել զնորափթիթ աւուրս ծառոյն այնորիկ։ Բազումք ի մարդկանէ եկին յաշխարհ և մեկնեցան անտի, այլ նա անդստին յերկերիւր ամաց հետէ և առաւել հաստարմատ կայ մնայ յանտառին։

Սակայն էր երբեմն զի և ծառս այս էր իբրև զմի ի խոզակաց անտի որք չրջասփիւռ դընին ի գետնի առ ստորոտով նորա։ Խոզակն յորոյ վերայ դուն ուրեք տեղան կաթիլք ցօղոյ պնդեալ պահէր զծառն ի սերման իւրում. կոճղն այն հաստաբուն, և խիտ առ խիտ ոստքըն և տերևք ծնան ի միջէ խոզակէ անտի, և ծառն գամ քան զգամ աճեցեալ բաժանեցաւ ի ճիւղս ճիւղս. զսնունդ իւր առնու յերկրէ, պարարի յանձրևաց և ծծէ զցօղ երկնից։ Այլ հող, անձրև և ցօղ ապիկար են բուսուցանել ինչ առանց խոզակին կամ արգելուլ զխոզակն փոխել ի կաղնի։

Հանգոյն խոզակին և մանուկն փոքրիկ աճէ տակաւ առ տակաւ, և ի ծնանելն իւրում բերէ ինքեան զբովանդակ և զընդաբոյս կարողութիւնս իւր, զմիտսն, զդատողութիւն, զզ

յիշողութիւն, զգիտութիւն բարւոյն և չարին, և զինդիր ճշմարտին և զստոյն։

Յուշ ած միանգամ զայր հանճարեղ զոր ծանեար և զորմէ լուեալ իցէ քո, կամ զայր բազմագէտ որ բազկատարած դիմէ յօգնութիւն նմանեաց իւրոց և որ զնմանութիւն բերէ ծառոց մեծաց, ասասցիր ընդ անձն քո, եթէ և սա իբրև զիս տղայ էր և տգէտ, և էր երբեմն զի անբաւական էր գիտել զբարին և ըզ չարն և որոշել զճշմարիտն ի ստոյն։

Եթէ չէր քո զխոզակ տեսեալ, անմարթ էր քեզ հաւատալ մեծութեան կաղնւոյն, և և եթէ չէր քո զմանուկ տեսեալ, անհնար էր քեզ հաւատալ բանից առն հանճարեղի և իմաստնոյ։

Գիտութիւն սնունդ է մտաց, որպէս հող, անձրև, և ցօղ՝ ծառոյն, որ տարածանէ զարմատս ընդ երկրաւ։ Մատեանք հմտալիցք սընունդ տան մտաց նորա, և բարգաւաճ գործեն զկարողութիւնս մտացն աղգի աղգի ծանօթութեամբք։

Ի գործ արկ զմիտս քո, և մատակարարեա՛ նմա զսնունդ կարևոր ի բարգաւաճումն նորին։

Քանի՞ արդեօք ամք անցին ի վերայ, մինչև կաղնիդ վիթխարի եհաս յայդ հասակ իւր յաղթ, և քանի՞ փոփոխմունք եղանակաց։ Մինչդեռ տունկ ինչ էր նա մատաղաբոյս, զոր և մանուկ մատաղ կարէր անաչխատ արմատախիլ առնել և կորզել զնա ի հողոյ ի բաց, քանի՞ ամանորք անցին մինչ ի ծառանալ դորա։

Այսպէս և զարդուն հասակի մանկանն պէտք են բազմաժամանակեայ աւուրց։

Մարթ է խոզակին կորնչել ի դետնի, անհետ լինել ուղղչից մատաղ տնկոյն, և չախչախեալ բեկանել ծառոյն. այլ յետ աճելոյն մնայր նմա լինել կաղին. և սակայն չէր մարթ զի ի միում եղանակի ծաղկեալ արձակէր սաղարթս և ի միւսումն ո՛չ, որպէս և են ծառք որք ընձիւղեալ և ցամաքին ի նոյն և ի միում տարւոջ։

Մարթ է մանկան իմաստուն լինել կամ անմիտ, այլ ընդ աճելն իւր լինի այր կատարեալ. բնութիւն նորա չէ հանգունատիպ անասնոցն, անմահական է նորա հոգի։

Ջան ի գործ արկ խնամ տանել հոգւոյդ, զբրացո՛ զնա գիտութեամբ և ճշմարտութեամբ, գիտասցիր զի հոգի պատկեր Աստուծոյ է, և յԱստուծոյ տուաւ քեզ այն։

Կաղնին կեայ ամ հարիւրաւորս. միտք մարդոյ վասն անմահութեան ստեղծան։

Մի՛ արհամարհեր զմանուկն և մի՛ ապաքաներ զԱստուածային պատկեր նորա։

ԺԲ.

Արեգակն դիմէ ի մուտս իւր և ծածկի յետ կոյս լերանց, ամիսոիին ճաճանչք նորա, և գիշեր իջեալ յերկնից պատի զերկրաւ։

Ո՛չ դոյն խոտոց և ոչ երփներանգ վայլ ծաղկանց նկարին այլ եւս առաջի աչաց իմոց. հիւղ, ոչխար, հովիւ և ամենայն ինչ ծածկին ընդ սեւաթոյր քողով գիշերոյ, ոչինչ այլ եւս պատկերի աչաց իմոց ի տեսիլ՝ որպէս եթէ ոչինչ էր լեալ։

Եղո՛ւկ հիքիդ, ում ոչինչ տեսանելի է, քանզի ծածկեալ թուին մեզ դալարիք և ծաղկունք, հիւղք և ծառք և խաչինք և հովիւք նոցա։ Դարձո՛ զաչս քո ի վեր յերկինս կոյս, դէտակն կալեալ տե՛ս զաստեղս երկնից որք ելանեն մի զմիոյ կնի առ ի լուսաւորել զհամատարած մակերեւոյթ երկնից։

ԺԳ.

Հասին աւուրք ձմերայնոյ, դաշտորայք երեւին խոպանացեալք և կորդացեալք, չիք ձայն բարբառոյ, և ոչ շշունչ, ոչ ճռուողումն թռչնոց, և ոչ բզզանք միջատաց, ջուրն ծորան սառուցեալ է որպէս զապառաժ։

Ծառք ձգեալ տարածանեն յօդս զոստս իւրեանց կապտեալս ի սաղարթուց իբրև զբազուկս վտիտս, և հիւթ երկրի ոչ ևս ընթանայ յերակս նոցա. ոչ ևս երևին երփնագոյն ծաղկունք և ոչ պայծառագեղ երեսք երկնից։

Արեգակն ծագէ թախծեալ և տրտում և առանց ջերմութեան, գոգցես ինն առ ի յանդիման կացուցանել զաղէտս համատարած բընութեան։

Լա՛ց, բնութիւն, և ողբա՛ ի վերայ ծննդոց քոց, որք խուն մի յառաջ անդորրաւէտ և հրճուալից վայելէին ի գանձս բարեաց քոց. վարդ բուրեր զիւրն անուշարոյր հոտ. որթ ըզ խաղող՝ և ամենայն տունկ տայր զիւրն պտուղ։

Ո՞վ բնութիւն չքնաղ, ծնունդ Աստուծոյ, ասա՛ ինձ, ընդէ՞ր տրտում ես, միթէ անտե՞ս արար զքեզ Աստուած, և միթէ ի կորո՞ւստ մատնեալ իցես։

Ո՛չ այդպէս, այլ անպակաս են խնամք Աստուծոյ զքէն, և ձեռն նորա ի վերայ քո։ Եկեսցէ ժամանակ յորում վերընձիւղեալ ծաղկեսցին ծառք քո, վարդն առնու անդրէն ըզ

խնկաբոյր հոտ իւր զառաջին, երկիր զիւր կա-
նաչագեղ դալարիս, գայ և դարուն ծաղկա-
պսակ պարել շուրջ զքև։

Մի՛ տրտմիր, ո՞ բնութիւն, և ո՛չ ընդ որս
ծածկին ընդ դաշտօքդ անյարիր, և չերեւին
այլ ևս ի վերայ երկրի։

Զի՞ է զի վարդն և մուրտ ամ ըստ ամէ ծաղ-
կեսցին դալարագեղ, և մարդ մշտնջենաւո-
րապէ՛ս մեռանիցի։

Կորնչիցի՞ն արդեօք ընդ հողով այնքանի
գիտութիւնք և առաքինութիւնք։

Ուխք արտասուաց հեղեալք զդերեզմա-
նօք չմարթիցի՞ն արդեօք կենդանացուցանել
զմարդն անշնչացեալ։

Սակայն ո՛չ այնպէս, այլ իմաստութիւն և
առաքինութիւն անմահ կացցեն մնասցեն
իբրև զմուրտ և զվարդ, և սրբեսցին արտա-
սուք յաչաց մարդկան ի ժամանել յաւիտենա-
կան տարւոյն. կացցուք մնասցուք ապա և այլ
փոքր միւս ևս . . . .։

ԺԴ.

Ուստի՞ գաս, որդի մահու, զի՞ լաս և առ
իմէ՞ տրտմեալ լցես։

—Ցեսի զվարդ զի ընդ առաւօտն գեղածի-
ծաղ կենաց իւրոց բացեալ զթերթս յարևու՝

շողայր երփնագեղ, անցի անդրէն և տեսի և
ահա թարշամեալ կայր զցօղնով իւրով, և գեղ
նորա անհետացեալ և տմոյն։ Ոչ ևս քաղցր է
բուրումն նորա և թերթք նորա ցան և ցիր տա-
բածեալ ի գետնի կոխան լինին ոտից մարդկան։

Էր ի դաշտին ծառ մի բարձրաբերձ, ոս-
տքք նորա տերևազարդք շուրջանակի տա-
բածեալ գործէին հովանի, և էր բուն նորա
անդրդուելի և արմատք իբրև զկեռիս։ Ցետ
սակաւուց դարձ արարի անդրէն, և ահա հող-
մն սաստկաշունչ կապտեր զտերևս նորա զա-
զաղունս և զդալկացեալս, ոստք նորա անկա-
նէին ի սուր սայր կացնոյ փայտահարին։

Եռային զեռային որդունք սորսորեալ ի
կոճեղէ նորա և փուտ փայտին թօթափէր իբ-
րև զփոշի։

Ցեսի զմիջատս զի շողշողէին ի լոյս արեգա-
կան, և թռթռէին յեղերս ջուրց, թևք նոցա
պայծառք իբրև զոսկի և զծիրան, մարմինք
արագաշարժք և իբրև զզմրուխտ կանաչագոյնք,
և թիւք նոցա անհամար։ Այլ ի դառնալ իմում
ընդ երեկս տեսի զկէս ի նոցանէ ընկղմեալս ի
ջուր, և զմիւս կէսն հողմահար սատակեալ։
Ծիծառն ափ յափոյ որսացեալ եկեր զնոսա, և
ձուկն եկուլ ընդ ջրոյն, և ոչ մնաց ի նոցանէ
և. ո՛չ մի։

Ցեսի և զմարդ ի զօրութեան իւրում, դէմք
կայտառ և զուարթագին, և ամենայն անդամք
մարմնոյն առոյգ և զօրաւոր, ոստնոյր և ոստոս-

տէր, երդ ի բերան պարէր և խնդայր, և հա-
մարէր եթէ չիցէ ոք իբրև զնա երիտասարդա-
գոյն և առուգադեղ։ Ունցի ընդ այն և ահա
տեսի զմարմին նորա տարածեալ ցուրտ և մերկ՝
անշարժ ոտիւք և ձեռամբք կարկամելովք։
Վաղ իսկ կորուսեալ էր հիգին զկեանս իւր և
ննջեալ զքուն յաւիտենից։

Ուրծաթափայլ լուսին զերդ կուսան նազելի
բարձրանայ ի կամարս, և լոյս նորա աղօտ ցո-
լանայ ի կապուտակ դաշտին։

Բոյլք աստեղաց, արջն մեծ և փոքրն,
Զայլն ահեղ և բեւեռային աստղն անշարժ՝ որ
առաջնորդէ նաւապետին, վառ ի վառ շող-
շողին զգլխովք մերովք։ Շառագոյն լոյս երե-
կոյին երթայ և անհետանայ, և ճրագունք շի-
ջանին ի տունս, այլ ջահք երկնաւորք գեղա-
փայլ շողշողին և փայլին ի կարգս իւրեանց։ Մի
աշխատ լինիր թուել զնոսա, քանզի անթիւ
են որպէս աւազ առ ափն ծովու, այլ ո՛չ եր-
բէք տեսանես որ ի վեր է քան զնոսա։

Հայկն ցուցանէ զբաղմաճաճանչ ճակատ
իւր, և շնիկն՝ զսպիտակափառ դէմն։
Ամենայն աստեղք հնազանդ են աստուածա-
կան անյեղլի օրինաց. զի Արարիչն տիեզերաց
ետ արեգական զփառահեղ ճաճանչս նորա լու-
սատու լինել աշխարհի, և մատանիչ գծեալ
զկայս և զշաւիղս մոլորակաց, արդելու նոցա
անցանել ըստ սահմանս իւրեանց։

Եթէ հնար լիներ ճանապարհ առնել քեզ

յանսահմանութեան անդ իբրև զնետ սլացեալ,
յետ բիւր բիւրուց ամաց դարձեալ չմարթեր
քեզ հասանել ի ծագս տիեզերաց։

Զի և ի խորին անկիւնս երկնից դոյր քեզ
միշտ առաջի ելանել նորոց արեգականց և մո-
լորակաց սահմանելոց յարբանեկութիւն։

Ամբարձէ՛ք զաչս ձեր ի վեր, ո՛վ հէք մահ-
կանացուք, Աստուած վասն այնորիկ ամփոփ-
եաց զարև ի մայր իւր, զի տեսանիցէք զան-
թիւ դունտս հրեղէնս։ Թաւար պատեաց զեր-
կիր զի զմտաւ ածիցէք զօրն յետին ահաւոր։

Բիւրաւոր արարածք ընուն զերկիր, նոյն
և անհամար կենդանիք զօդ և զջուր, և ո՞
պատմեսցէ զբնութիւն և զբարս նոցա, կամ
չափեսցէ զչրջանս աստեղաց, և ծանիցէ զսահ-
մանս նոցա։

Տիեզերք ամենայն ի ձեռին են Աստուծոյ,
և ո՛չ բաժանին ի նմանէ որպէս մանուկ ի մո-
րէն։

Աստուած զովացուցանէ զբնակիչսն Հրատի,
և ի ջերմութիւն երևակին՝ եօթն գունտք հրե-
ղէնք ի հրամանէ նորա շուրջ գան զնովաւ. և
ամենայն աստեղք օրհնաբանեն զԱստուած։

ԺԵ.

Ցամաքեցաւ ծաղիկն ի ծղօտ իւր, և թա-
թափեցան թերթք նորա ի գետին։ Ցեսի զայն
վերընծիւղեալ և զծղօտ նորա կոկոնազարդ,

հոտ անուշից բուրէր ի նմանէ շուրջանակի։

Տեսի զդիմել արեգական ի մուտս իւր, և զդիշեր որ պատէր զերկրաւ ծագէ ի ծագ։ Ոչ ինչ յայնժամ ի տես գայր աչաց և ո՛չ ձայն ի լուր ականջաց։ Ոչ բաղում ժամք անցին ի վերայ, և ահա ծագեաց արփին ընդ արևելս, ոսկեգոյն փայլին գագաթունք լերանց, արտոյտն ողջունէ զգալուստ նորա, և իսպառ մերժի տարագրի խաւարն։

Տեսի զմիջատն բարեհեսիլ և առոյգ, այլ ընդ հուպ տեսի զնա թափեալ իսպառ ի զօրութենէն և ոչինչ խնդրէր ուտել, չինեաց իւր գերեզման, և պատատեցաւ ի բժոժին, և չիք նորա այլ ևս ո՛չ շարժումն և ո՛չ զօրութիւն։ Այլ յետ ոչ բազում աւուրց և ահա ծակէ որդն զգերեզման իւր, տեսի զնա զի գայր ելանէր անտի արտաքս, և ի թևս թեթևս թըռանէր յոստոց յոստս։

Նոյն և քեզ լիցի, ո՞վ մարդ, զի եթէ եղծանելի է քո մարմին, այլ անմահ է հոգի քո, և բաստ քո յաւիտենական կախեալ է յաստի կենաց քոց։

Ո՞ բառնայ զքարինս գերեզմանաց, և արտաքս կոչէ զմեռեալս, և ո՞ ժողովէ զոսկերս նոցա սփռեալս ընդ աշխարհ ամենայն։

Ո՞վ է դա՝ որ բազմեալ ի վերայ ամպոց հըրեղինաց ձայնիւ փողոյ և բազմութեամբ հըրեշտակաց իջանէ յաշխարհ։

Օծեալն է այն, որդին Աստուծոյ, փրկիչն

աշխարհի, և բարեկամն արդարոց։

Ուրախացեալ ընդ աստուածային փառս իւր ընկալեալս ի հօրէն յաւիտենից, տայ անտի և մօր իւրում, կոչէ առ ինքն որք ոչ անցին զպատուիրանաւ իւրով, ևս և զամենայն վաստակեալս և զլկեալս վասն իւր։

Մի՛ տրտմիր ապա, որդիդ անմահութեան, պարտեցաւ աւերիչն արարածոց, և Յիսուս յաղթեաց նմա իւրով մահուամբ, ուրախ լեր, որդիդ անմահութեան։

Ժ.Զ.

Հոտ անոյշ է վարդին, այլ պատեալ է նա փշովք, քաղցրահոտ է շուշան դաշտին, այլ բուսանի նա ի մէջ դժնկաց։

Գեղաժիծաղ է դարուն, այլ ընդ հուպ անցանէ, գեղեցիկ են աւուրք ամարան, այլ ի վերայ հասանել ձմերան ոչ ևս յիշեմք զամառն։

Ծիածանն երփն երփն փայլի հանդարտիկ, այլ սուղ ինչ ժամանակ։

Քաղցր են կեանք, այլ մահ՝ դառնութիւն նորա։

Գոյ այլ աշխարհ ուր վարդին չիք փուշ, ծաղկունք չբուսանին յորմս, դարուն նորա մշտատև և անանց, օրն ցերեկ մշտապայծառ, անդ աճէ ծառն կենաց անթառամ ծաղկօք, անդ անթիւ հոգիք երգեն երգս հոգևորս և այելուս շուրջ զաթոռովն Աստուծոյ. սերովբէք հարկանեն զիւրեանց ոսկի քնար, և քե-

բովբէք թռանին ի թեւս հրեղէնս։

Ընդ են հայրենիք արդարոց, և չիք անդանօր մուտք չարի իրիք։

Չիք անդ հիւանդանալ ումեք, ո՛չ ջերմութիւն ամարան, ո՛չ ցուրտ ձմերայնոյ և ո՛չ մարտ պատերազմաց, այլ ամենեքեան փարեալ կան զմիմեամբք ի սէր անբծութեան։

Ի մեռանել միոյ ուրուք ի բարեկամաց մերոց կամ յազգականաց և ի ծածկել նորա ընդ հողով, ոչ այլ ևս տեսանեմք զնա յերկրի. այլ գացուք անդրէն զնա յերկինս, և միասցուք ընդ նմա՝ անմեկին ի նմանէ, անդ՝ ուրանօր սուրբք և առաքինիք և եթ օթևանին։

Օրհնել օրհնեմք և սիրել սիրեմք զՄաստուած յերկրի աստ, այլ առաւել ևս յերկինս օրհնաբանեալ սիրեսցուք զնա, անդ տեսցուք զբանն կենաց զՅիսուս, որ եկն յաշխարհ վասն մեր և քարոզեաց զճանապարհն յաւիտենական. Ընդ տեսցուք զՄաստուած ի փառս իւր, զոր ո՛չ տեսանեմք ի յերկրի, այլ սիրել միայն զնա կարեմք յաստիս։

Ո՛չ կամիմք թողուլ զերկիր, այլ պարտ է մեզ զՄաստուած զմտաւ ածել հանապազ, զի անցաւոր եմք մեք յերկրի աստ, և յանցանել գնալ մեր աստի, յաւիտեանս յաւիտենից լիցի մեզ բնակել անդանօր անվախճան։

ՎԵՐՋ

ՊԻՏԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՅԱՆԿ ԳՐՈՅ

ԳՐԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԹԱՍԳԻՒՂԻ

Ա.— Ֆրանսուա կամ Սուտ բանալի թարգմանեաց 'ի գաղղիականէ. ԹՈՍՐՈՎ Ս. ՕՀԱՆԵԱՆ . . . . . գին 3 ղրշ

Բ.— Ընդարձակ Հանրահաշիւ կամ Գրահաշիւ. Ա. Հատոր. Յօրինեաց. ԳՐԻԳՈՐ Ց. ԹՆԿՐԵԱՆ . . . . գին 8 ղրշ

Գ.— Դիւրուսոյց Ա յբբենարան Հեղարան եւ Ընթերցարան Հայկաշնմանկանց. Յօրինեաց ՌԱՖԱԷԼԱՏ Ա. ԱՐԹԻՆՕՖ . . . . . գին 1 ղրշ

Դ.— Խորհուրդք հանդիսի արարչագործութեանն Աստուծոյ. Ցեղ 'իզբրաւոր բան. ՊՕՂՈՍ Գ. ՔԷՐԼՍՏԷՅԵԱՆ 2 ղրշ

ԸՆԴ ՄԱՄԼՈՎ.

Հաւաքածոյ զուարճալի եւ կրթական պատմութեանց։

Նոր Քերական Գաղղիարէն դիւրուսանելի խառն ընդ Հայերէնի հանդերձ բառարանիւ։

Ընդարձակ Հանրահաշիւ կամ գրահաշիւ Բ. Հատոր. ԳՐԻԳՈՐ Ց. ԹՆԿՐԵԱՆԻ։

5

2